



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐ
ՀՐԱՄԱՆ N 5 - Ա

ք. Իջևան

11 հունվարի 2013 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆՈՎ
ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԳՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված „Գնման գործընթացի կազմակերպման“ կարգի 13-րդ կետի 1-ին ենթակետով

հ ր ա մ ա յ ու մ ե մ

1. Մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանում, ընթացիկ պահպանում և շահագործում (բաժին 04, խումբ 05, դաս 01, ծրագիր 05, հոդված 4251) ծրագրով նախատեսված աշխատանքների գնումները կատարելու համար պատասխանատու ստորաբաժանում սահմանել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչությանը:

2. Նախադպրոցական կրթություն (բաժին 09, խումբ 01, դաս 01, ծրագիր 01, հոդված 4239), Տարրական ընդհանուր կրթություն (բաժին 09, խումբ 01, դաս 02, ծրագիր 01, հոդված 4239), Ընդհանուր միջնակարգ կրթություն (բաժին 09, խումբ 02, դաս 01, ծրագիր 02, հոդված 4239), Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն (բաժին 09, խումբ 02, դաս 02, ծրագիր 02, հոդված 4239) ծրագրերով նախատեսված ծախսերի գնումներ կատարելու համար պատասխանատու ստորաբաժանում սահմանել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը (գլխավոր մասնագետ Խ. Խաչատրյան):

3. Հայաստանի Հանրապետության 2013 թ. պետական բյուջեով <<Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում>> /բաժին 01, խումբ 01, դաս 01, ծրագիր 03 / և <<Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կարողությունների զարգացում>> /բաժին 01, խումբ 01, դաս 01, ծրագիր 11/ ծրագրերով նախատեսված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումների գործի համակարգման պատասխանատու սահմանել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության վարչատնտեսական բաժնին:

2. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



Ս. ԴԱՎԹՅԱՆ

Ս. ԴԱՎԹՅԱՆ